**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը՝ Անկախության տոնի կապակցությամբ**

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս մեր ազգային տոնի՝ Անկախության օրվա կապակցությամբ: Տոն, որի փափագն ու զգացողությունը մեր սերունդները մշտապես կրել են իրենց հոգում:

1991 թվականի սեպտեմբերի 21-ը նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության մեջ: Անկախ պետականության կերտումը մի դժվարին ու պատվարժան ճանապարհ էր, որը մեր ժողովուրդը հաջողությամբ հաղթահարեց: Այն պետության անցած ուղու, հաջողությունների, փորձությունների ու ապագա ծրագրերի մասին խորհելու առիթ է նաև:

Ասված է՝ միասնությունն առաջին քայլն է դեպի անկախություն: Հայոց պատմության մեջ, թերևս, աննախադեպ այդ միասնության շնորհիվ քառորդ դար առաջ ձեռքբերեցինք մեր անկախությունը: Նույն միասնությամբ ու բազում զոհերի գնով պաշտպանեցինք ու վերահաստատեցինք ազատ ու անկախ ապրելու մեր և արցախցիների իրավունքը:

Համոզված եմ՝ նույն միակամությամբ էլ պետք է անենք հնարավորը՝ շենացնելու մեր երկիրն ու մարզը, դիմակայելու ցանկացած մարտահրավերի, որովհետև մենք ենք մեր կյանքի գլխավոր ճարտարապետները, և այն, ինչ պետք է կառուցվի այս հողի վրա, մեծապես կախված է մեզնից յուրաքանչյուրիցս:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս Անկախության տոնի առթիվ, մեր երկրին ու ժողովրդին մաղթում խաղաղություն ու բարօրություն:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**  **Ս. Խաչատրյան**